Պարույր Սևակ

Գժվում եմ

Եվ ինձ լսելով՝
Կարող են ասել.
«Գժվե՞լ է, ի՞նչ է».
Իսկ ես էլ կասեմ.
«Այո՛, գժվե՞լ եմ,
Ինչո՞ւ չգժվել»:
Իսկ գժվելով չե՞ն սիրում ու ատում:
Իսկ գժվելուց չէ՞ փայտը ճարճատում:
Առանց գժվելու՝ չկա՛ շահած մարտ:
Առանց գժվելու՝ չե՛ն ծնի նոր մարդ:
Մինչև չգժվի՝ ջուրը չի՛ եռա,
Կեղև չի պատռի հատիկը նռան:
Ծառե՞րն են փթթում՝
Գժվա՛ծ են անշուշտ:
Երկի՞րն է պտտում՝
Գժվա՛ծ է անշուշտ...
Սերմերը մինչև կարգին չգժվեն՝
Բե՛րք չեն դառնալու:
Թաթերը մինչև կարգին չգժվեն
Ձե՛ռք չեն դառնալու:
Բառերն էլ մինչև կարգին չգժվեն՝

Ե՞րգ չեն դառնալու...
Ա՜խ, ուր էր թե ես միշտ գի՛ժ լինեի...

01.X.1961թ.
Երևան